

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Վարդանանք կրթահամալիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

ԱԾԱՆՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ղեկավար՝ Անահիտ Անտոնյան
Կատարող՝ Արևհատ Պետրոսյան

Երևան 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԱԾԱՆՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ.....	4
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ածանցումը արմատի, բառի կամ բառահիմքի և բառակազմական ձևային միացությամբ նոր բառեր կազմելու երևույթն է: Ածանցումը բառակազմական եղանակներից մեկն է, ունի բազմադարյան պատմություն և բառակազմական շատ մեծ դեր է կատարում բառապաշարի հարստացման գործում: հայ քերականագիտության մեջ ածանց քերականական անվանումը առաջին անգամ գործածվել է Դ. Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեջ¹: Ներկայումս ածանց անվանումով հասկացվում են զուտ այն մասնիկները, որոնք զանազան հիմնական ձևայինների կամ բառերի հետ նոր բառեր են կազմում: Ածանցը բառաստեղծական-բառակազմական ձևային է, որը մեծ ու կարևոր դեր է կատարում լեզվի բառապաշարի հարստացման գործում:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ածանցումը ժամանակակից հայերենում և առանձնահատկությունների ուսումնասիրություն կատարել:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակին համապատասխան առաջադրվում և հնարավորինս լուծվում են հետևյալ խնդիրները.

- 1) Ուսումնասիրել ածանցման բնորոշ գծերը:
- 2) Կատարել ածանցների ձևափոխության դասակարգում:
- 3) Ածանցները դիտարկել ըստ դիրքի, ըստ կենսունակության աստիճանի, մասամբ էլ նաև ըստ ծագման:

Ներկայումս ածանց անվանումով հասկացվում են զուտ այն մասնիկները, որոնք զանազան հիմնական ձևայինների կամ բառերի հետ նոր բառեր են կազմում: Ածանցը բառաստեղծական-բառակազմական ձևային է, որը մեծ ու կարևոր դեր է կատարում լեզվի բառապաշարի հարստացման գործում:

Ածանցներ կան, որոնք ոչ թե մեկ, այլ մեկից ավել իմաստներ են արտահայտում: Ածանցները լինում են երկու տեսակ՝ մենիմաստ և բազմիմաստ:

ԱԾԱՆՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ածանցները ինչպես ձևային, այնպես էլ իմաստային որոշակի առնչություններ են ունենում միմյանց նկատմամբ: Կան ածանցներ, որոնք արտաքին-հնչյունական կազմով նույնն են, բայց տարբեր իմաստներ են արտահայտում և կան ածանցներ, որոնք տարբեր հնչյունական կազմ ունեն, բայց նույն կամ իրար մոտ իմաստներ են արտահայտում, և կան ածանցներ, որոնք հնչյունական կազմով տարբեր լինելով՝ հակադիր իմաստներ են արտահայտում¹: Բառերի նման ածանցները ևս լինում են՝ համանուն, հոմանիշ և հականիշ:

Համանուն ածանցներ

- **Համանուն են կոչվում հնչյունական կազմով նույն, իմաստով տարբեր ածանցները: Այդպիսիք են՝**

-ԱՆԻ	ունեցողի իմաստ (լեզվանի, գեղանի)
-ԱՆԻ	հոգնակի հավաքականի նշանակությամբ (նամականի, տեսականի)
-ԱՆՔ	բայանվանական նշանակությամբ (երազանք, բամբասանք)
-ԱՆՔ	հոգնակի հավաքականի նշանակությամբ (տեղանք, կտորտանք)

Հոմանիշ ածանցներ

- Հոմանիշ են կոչվում արտաքին հնչյունական կազմով իրարից տարբեր, իմաստով նույն կամ մոտ ածանցները: Հոմանիշ ածանցներն իրենց հերթին լինում են՝ նույնանիշ և համանիշ:

Նույնանիշ ածանցները հնչյունական կազմով տարբերվելով իրարից՝ նույն կամ գրեթե նույն իմաստ են արտահայտում, օրինակ՝ -բար, -պես, -որեն, -իկ, -ակ, -ուկ, -յա, -ե և այլն:

Նույնանիշ ածանցները սովորաբար հանդես են գալիս նույնահիմք կազմություններով և կարող են փոխարինվել միմյանցով²:

¹ Ա.Ս.Մարգարյան, Ժամանակակից Հայոց լեզու, Երևան, 1990, էջ 227:

² Ա.Ս.Մարգարյան, Ժամանակակից Հայոց լեզու, Երևան, 1990, էջ 228:

Հոմանիշներ են այն ածանցները, որոնք արտահայտում են՝ ձևի նշանակություն,

-ԲԱՐ, -ՊԵՍ, -ՈՐԵՆ	ձևի նշանակություն (հարազատաբար-հարազատապես- հարազատորեն),
-ԻԿ, -ԱԿ, -ՈՒԿ	Նվազափաղաքչական, նվաստական-արհամարհական նշանակություն, ցույց է տալիս գործողի անուն և կազմում է գոյականներ (մարտիկ, լճակ, թզուկ)
-ԱՐԱՆ, -ՍՏԱՆ, -ԱՆՈՑ, -ՈՑ, -ՈՒՏ	տեղի նշանակություն (լսարան, հիվանդանոց, Հայաստան)
-ԻՉ, -ՈՂ, -ՈՐԴ, -ՊԱՆ, -ԱՐԱՐ, -ՎՈՐ	մի բան անողի, կատարողի նշանակություն (երգիչ, ուսանող, որսորդ, այգեպան)
-ՈՒՄ, -ՅՈՒՆ, - ՄՈՒՆՔ, -ԱՆՔ, -ՈՒՅԹ, -ՈՒԹՅՈՒՆ	Բայանվանական նշանակություն (զգացում, զգացմունք, դոփյուն, սովորույթ, սովորություն):
-ԱՅԻՆ, -ԱԿԱՆ	Վերաբերական, հատկացական նշանակություն (տնային, տնական)

Հականիշ ածանցներ

o Հականիշ են կոչվում տարբեր հնչյունական կազմ ունեցող այն ածանցները, որոնք հակադիր իմաստ են արտահայտում:

o Նախաձեռնությունները հակահիշներ ունեն, իսկ վերջաձեռնություններն ընդհանրապես հակահիշներ իմաստներով իրար հետ չեն կապվում:

o Կան վերջաձեռնություններ, որոնք հակահիշներ հարաբերություն ունեն որոշ աձեռնությունների հետ, և արտահայտում են մի բան ունեցողի և չունեցողի, օժտված լինելու կամ չլինելու նշանակությամբ (բախտավոր-անվախտ, կեղծավոր-անկեղծ):

Աձեռնությունների տեսակներն ըստ գործունության

ժամանակակից հայերենում կան նաև այնպիսի աձեռնություններ, որոնք ձուլվել են բառին և չեն գիտակցվում որպես աձեռնություններ: Դրանք են ոչ գործուն և անկենսունակ, գործուն և կենսունակ աձեռնությունները:

Գործուն կամ կենսունակ են կոչվում այն աձեռնությունները, որոնք բառակազմական ձևայիններում պահպանվում են և շարունակվում են նոր բառեր կազմել, օրինակ՝ -ություն, -ույթ, -անք, -իկ, -ում, -ային, -ված, - վածք և այլն: Իսկ ոչ գործուն կամ անկենսունակ են կոչվում այն աձեռնությունները որոնցով նոր բառեր չեն կազմվում, օրինակ՝ -ած, -աշ, -անակ, -ունդ, -ուրդ և այլն:

Կենսունակ աձեռնություններ

Սրանք այն աձեռնություններն են որոնցով նոր բառեր են կազմվում, այդ պատճառով առավել մեծ արժեք են ներկայացնում, որոնք էլ իրենց բառակազմական դերով տարբերվում են իրարից: Այսպիսով կան կենսունակ աձեռնություններ, որոնցով

-ՈՒՅԹ,

-ՈՒԹՅՈՒՆ

-ԱՅԻՆ, -ԱԿԱՆ

Վերաբերական, հատկացական նշանակություն (տնային, տնական) բազմաբանակ հարյուրավոր և անգամ հազարավոր բառեր են կազմվում: Այսպիսով ըստ գործունության աստիճանի կենսունակ աձեռնությունները լինում են առավել կենսունակ և պասիվ կենսունակ:

Առավել կենսունակ են այն աձեռնությունները, որոնցով շատ մեծ թվով բառեր են կազմվում, սակավ կենսունակ են կոչվում այն աձեռնությունները, որոնցով համեմատաբար քիչ բառեր են կազմվում:

Դրանք են՝

Առավել կենսունակ	Սակավ կենսունակ
-ակ, -ական, -ային, -ան, -անոց, -անք, -արար, -ացի,- բար, -ե, -ենի, -երեն, -երորդ,- ելի, -ի, -իչ, -յա, -յան, -ոտ, -որդ, -որեն, -ոց, -պես, -վածք, -ու, -ություն, -ուկ, -ուհի,-ում, -ութ, -ք և այլն:	-ալի, -ածո/ածու, -անի, -ավուն, -ավետ, -ատ, -ացու, -գին, -գույն, -եղ, -ին, -իցս, -կոտ, -մունք, -ույց, -ունի, -ուստ, -ուտ, -ոն, -պան, -ված և այլն ³ :

Անկենսունակ ածանցներ

Անկենսունակ ածանցները, որոնք առանձնապես շատ չեն, լինում են երկու տեսակ՝

ա) այն ածանցներն են, որոնց բաղադրությունների մեջ հակադրվում են դրանց սկզբնահիմքին և իբրև առանձին բառակազմիչ ձևույթ են ըմբռնվում: Այդպիսիք են՝ -ած, -այն, -անուտ, -աշ, -ար, -եղի, -եստ, -րորդ, -ժեռ, -ժետ, -արիմ/-երիմ, -աստի, -եմն, -ինք, -ունդ, -ուչ, -իլ, -որ, -նի և այլն:

բ) այն ածանցներն են, որոնք վաղուց ձուլվել են բառահիմքին և ինքնուրույն բառակազմական ձևույթ չեն գիտակցվում: Այս տեսակի ածանցները քարացած կամ մեռած ածանցներ են: Այդպիսիք են՝ -ան, -ար, -ին, -ուկ, -իճ, -ատ, -ոտ, -աղ, -իղ, -եմ, -իմ:

Ածանցների տեսակներն ըստ դիրքի

Լեզուներում ընդհանրապես ածանցներն ըստ դիրքի լինում են երեք տեսակ՝

o Նախաածանցներ

o Միջածանցներ

o Վերջածանցներ

Նախաածանցները դրվում են արմատի կամ բառի սկզբում, միջածանցները՝ արմատի ներսում, իսկ վերջածանցները՝ արմատի կամ բառի վերջում:

Ածանցների այդ երեք տեսակից հայերենին հատուկ են նախաածանցներն ու վերջածանցները, որոնք իրենց և դիրքով և ծագման ու պատմական կյանքով,

³ Ա.Ս.Մարգարյան, Ժամանակակից Հայոց լեզու, Երևան 1990 էջ 231

իմաստային կիրառություններով, բառակազմական արժեքով ու նշանակությամբ, քանակով ու տեսակար կշռով որոշակիորեն տարբերվում են իրարից և կազմում առանձին համակարգեր:

Նախաձանցներ

Նախաձանց են կոչվում այն մասնիկները կամ ձևույթները, որոնք դրվում են արմատի կամ բառի սկզբում և կազմում նոր բառ, օրինակ՝ անտուն, տարօրինակ, ընդմիջտ և այլն:

Հայերենն ունի համեմատաբար քիչ նախաձանցներ: Ստորև ներկայացնենք դրանց ամբողջական ցանկը.

ԱՆ-	ԳԵՐ-	ՀԱՄ-	ՇԱՂ-	ՏԵՐ-
ԱՆԴՐ-	ԴԵՐ-	ՀԱՐ-	ՇԱՐ-	ՏՐԱՄ-
ԱՊ-	ԴԺ-	ՀԵՂ-	Չ-	ՓՈՂ-
ԱՌ-	ԵՆԹ-	ՀՈՄ-	ՊԱՐ-	ՓԱՐ-
ԱՐՏ-	ԸՆԴ-	ՄԱԿ-	ՍՏՈՐ-	ՓՈԽ-
ԲԱՂ-	ԹԵՐ-	ՆԱԽ-	ՎԵՐ-	
ԲԱՑ-	ՀԱԿ-	ՆԵՐ-	Տ-	

Նախաձանցները, իբրև բառակազմական ձևույթներ, ունեն իրենց համապատասխան հնչյունական կազմը կամ կառուցվածքը: Նրանք այսպիսի հնչյուններից կազմված միավորներ են՝

ա) մեկ- չ-, տ-, երկու- ան-, առ-, ապ-, երեք -արտ-, բաղ-, բաց-, ենթ-, ընդ-, հակ-, համ-, տար- և ամենաշատը՝ չորս – անդր-, ստոր-, տրամ և այլն:

բ) ընդհանրապես վերջանում են բաղաձայնով կամ բաղաձայնական ձևույթներ են.

գ) միահնչյուններից՝ չ-ից և տ-ից բացի մյուսները պարտադիր կերպով ձայնավոր են ունենում:

Նախաձանցները արմատին կամ բառին միանում են երկու կերպ.

ա) անմիջականորեն, առանց կապող ձայնավորի՝ հոդակապի, օրինակ՝ անբախտ, անպայման, անշահախնդիր, անհուսալի, դժբախտ, դժգոհ, դժգույն, տկար, տհաս, չտես, դերբայ, ներգաղթ, շաղկապ և այլն,

բ) հոդակապով, օրինակ՝ ենթադրություն, ենթակա, արտահանել, արտակարգ, հակադարձ, հականիշ, տրամադիր և այլն:

Ժխտական նախածանցներ

Ժխտական են կոչվում այն նախածանցները, որոնցով կա՛մ բացասվում է բառի հիմնական նշանակությունը, կա՛մ ցույց է տրվում մի հատկություն մի բան չունենալը⁴: Հայերենը ունի հինգ ժխտական նախածանց՝ ԱՆ-, ԱՊ-, ԴԺ-, Տ-, Չ-, որոնք ոչ ժխտական ածանցներից ո՛չ միայն նշանակությամբ, այլև ծագմամբ ու պատմականությամբ են տարբերվում: Ժխտական նախածանցները մյուս նախածանցներից շատ ավելի առաջ են ստեղծվել և սերում են նախագրային շրջանից:

ԱՆ-, ժխտական նախածանցների մեջ ծագումով ամենահին, ամենագործուն ածանցն է, որը ըստ ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանների տվյալների պատահում է 3 հազարից ավելի բառերում: Գործածվում է նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից՝ գոյականի, ածականի, բայարմատի հետ, կազմում բացասական նշանակությամբ բազմաթիվ բառեր:

Ակադեմիկոս Գ. Զահուկյանը կարծում էր, որ ան- ժխտական նախածանցը հնդեվրոպական ծագում ունի: Ան- ժխտականը, որ հավանաբար հնդեվրոպական ծագում ունի⁵, դրվելով գոյականների վրա՝

ԱՆ-	Կազմում է ածականներ՝ բացասական նշանակությամբ (անհույս, անվախ): Ածականների վրա՝ բացասում է նրանց նշանակությունը (անհարմար, անվստահ): Բայարմատների վրա՝ կազմում է ածականներ՝ բացասական դերբայների նշանակությամբ (անվարժ, անզգա): Այն գործածվում է՝ Բարդ բառերի հետ (անգրագետ, անանմարդաբնակ):
-----	---

⁴ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 220:

⁵ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 242:

	<p>Վերջածանցավոր բառերի հետ (անբուժելի, անհավատալիորեն):</p> <p>Նախածանցավոր բառերի հետ, (անվերադարձ, անտարբեր):</p> <p>Նախածանցավերջածանցավոր բառերի հետ (անտրամաբանական, անհամակրելի):</p>
ԱՊ-	<p>Ածանցը անցյալում դրվել է՝ Արմատական գոյականի և բայարմատի վրա՝ կազմում ածականներ՝ բացասական կամ ժխտական նշանակությամբ (ապաշուք, ապաջան):</p> <p>Աշխարհաբարյան շրջանում դրվել է նաև ածականի վրա, բացասելով նրա նշանակությունը (երջանիկ-ապերջանիկ) Մի խումբ բայերի, այդ թվում նաև պատճառական բայերի վրա՝ բացասվող գործողության նշանակությամբ (կենտրոնանալ-ապակենտրոնանալ):</p>
ԴԺ-//ՏԺ-	<p>Ծագում է պարսկերենից և հիմնականում գործածվում է այդտեղից փոխառյալ մի քանի բառերի հետ, օրինակ՝ դժբախտ-անբախտ, բախտ չունեցող, դժգոհ-անգոհ, ոչ գոհ, դժգույն-անգույն, դժկամ-տհաճող, չուզող, դժպարիշտ-ամբարիշտ, դժպատեհ-անպատեհ:</p> <p>Անկենսունակ լինելով, դժ- ածանցը նոր բառեր չի կազմում և հանդես է գալիս միայն սկզբնատիպ ձևերից կազմված բաղադրություններում (դժգունադեմ, դժգոհություն):</p>
Տ-	<p>Ժամանակակից հայոց լեզվում տ-ն անկենսունակ ածանց է և գործածվում է զուտ նախնական բառերում ու նրանցից կազմված բաղադրություններում (տգեղ-տգեղանալ, տգեղություն, տգեղադեմ, տգեղացում):</p> <p>Առաջ է եկել չ- ժխտական ածանցից, որոշ բառերում տեղի ունեցած փոխազդեցական հնչյունափոխության հետևանքով: Օրինակ՝ գրաբարյան տգետ,</p>

	տկար, բառերը, որոնցում այն ն՝ իմաստով, ն՝ դրսևորումներով համընկնում է չ-/ոչ մասնիկին:
Չ-	Առաջ է եկել ոչ բառից՝ ո-ի անկումով: Իբրև բառակազմական ածանց, շատ գործուն է եղել գրաբարում, որտեղ և բայարմատի, գոյականի և ածականի վրա դրվելով՝ կազմել է ածականներ և գոյականներ (չփույթ, չգոյ) Հայոց լեզվի զարգացման ընթացքում չ-ն, անժխտականի ճնշմամբ զրկվել է կենսունակությունից և հիմնականում գործածվում է որոշ թվով բայարմատների հետ և դրանցից կազմված բաղադրություններում (չբեր-չբերություն):

ԱՊ- երկրորդ՝ առավել գործուն ժխտական նախածանցն է: Հր. Աճառյանի մեկնությամբ ծագում է պարսկերենից և նախապես գործածվել է հենց այդտեղից փոխառված ապալեպ՝ անխորշ, անգոգ, ապերիսան//ապարասան՝ անսանձ և այլ բառերի մեջ⁶:

Ոչ ժխտական (դրական) նախածանցներ

Ոչ ժխտական (դրական) են կոչվում այն նախածանցները, որոնք բառի կամ արմատի վրա դրվելով՝ այլ նշանակություն են արտահայտում: Ժխտական նախածանցները տարաբնույթ իմաստներ են արտահայտում, ինչպես նաև շատ ավելի մեծ թվով ածանցավոր բառեր են կազմում:

Ի տարբերություն ժխտական ածանցների, որ առաջ են եկել ավելի վաղ՝ կենդանի խոսակցական լեզվում, դրական նախածանցները, համեմատաբար ուշ՝ 5-6-րդ դարերում են ստեղծվել՝ հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից և զուտ գրային, գրավոր ծագում ունեն: Հր. Աճառյանը նշել է, որ դրանք կամ պարզապես հայերեն բառեր են, կամ հայերեն սովորական ձևեր են՝ ձևով կամ նշանակությամբ փոփոխված, կամ մասամբ չեն ստուգաբանված⁷:

ԱՆԴԲ-	Նշանակում է դեպի այն կողմ: Դրվում է՝
-------	--------------------------------------

⁶ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2մաս, Երևան, 1951, էջ 163:

⁷ Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզուն, Երևան 1990, էջ 201:

	<p>Գոյականի վրա, կազմում գոյականներ (անդրաշխարհ, անդրշիրիմ)</p> <p>Գոյականից (մեծ մասամբ տեղի իմաստ ունեցող) կազմված ածականի վրա, կազմում ածականներ (անդրգերեզմանային, անդրլեռնային):</p> <p>Բայարմատի վրա, կազմում ածականներ (անդրադարձ, անդրաձիգ):</p>
ԱՌ-	<p>Ծագում է գրաբար առ նախդիրից, նշանակում է դեպի, մոտ: Դրվում է զանազան ձևայինների ու բառերի վրա, կազմում բայ, ածական, գոյական, մակբայ և անգամ կապ, (առձեռն, առհասարակ):</p>
ԱՐՏ-	<p>Ծագում է արտաքս (դուրս) բառից՝ -աքս մասի կրճատմամբ և նշանակում է դուրս, դրսում: Գործածվում է՝</p> <p>Բայերի հետ (արտաբերել, արտագրել) Բայարմատի հետ և կազմում ածական (արտաբեր, արտածին):</p> <p>Գոյականի հետ և կազմում գոյական կամ ածական (արտակարգ, արտացոլք):</p>
ԲԱՂ-	<p>Ծագում է բաղել, կցել բայի բաղ արմատից. նշանակում է կից, իրար հետ, միասին: Անկենսունակ ածանց է, գործածվում է որոշ՝ բաղադիր, բաղաձայն, և դրանցից կազմված բառերում (բաղադրիչ, բաղաձայնական):</p>

Վերջածանցները ժամանակակից հայերենում

Հայերենում վերջածանցները մեծ դեր կատարելով՝ շատ բառեր են կազմում, և ամենից առաջ բառարմատի կամ չածանցյալ հիմքի վրա ավելանալով:

Նյութական տարբեր խոսքի մասեր կազմող ածանցների մեջ գերակշռողն է գոյականակերտ ածանցները: Բաղադրվում են գոյականի, ածականի, թվականի, դերանվան, մակբայի, բայի, արմատական ձևային կամ բառահիմքի հետ և կազմում տարբեր չափ ու քանակով բառեր⁸:

⁸ Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզուն, Երևան 1990, էջ 236:

<p>Գոյականակերտ</p>	<p>Գոյականակերտ են կոչվում այն ածանցները, որոնք բառի հիմնական ձևային վրա դրվելով՝ գոյական են կազմում: Ժամանակակից հայերենում կան շուրջ 60 այդպիսի վերջածանց (-ակ, -անակ, -անոց, -անք, -արան, -ացի, -ինք, -իչ, -ոց, -ստան, -վածք, -ություն, -ուհի, -ունք, -ու, -ուրդ, -ք):</p>
<p>Ածականակերտ</p>	<p>Ածականակերտ են կոչվում այն ածանցները, որոնք բառի հիմնական ձևային վրա դրվելով՝ ածական են կազմում: Ածականակերտ ածանցները գոյականակերտ ածանցների նման հանդես են գալիս տարբեր խոսքի մասերով (-ալի, -ական, -անի, -ավետ, -ելի, -ին, -կան, -կուն, -յա, -ոտ, -եղ):</p>
<p>Թվականակերտ</p>	<p>Թվականակերտ են կոչվում թվական կազմող ածանցները, որոնք երեքն են՝ -րորոդ, -երորդ և -ական: Թվականակերտ ածանցները ածանցավոր բառեր են կազմում զուտ թվականներից՝ քանակական թվականներից (-րորդ), դասական թվականներ (-երորդ), բաշխական (-ական), իսկ դասական թվականներից՝ -ական ածանցով կոտորակային թվականներ են կազմվում:</p>
<p>Մակբայակերտ</p>	<p>Մրանք այն ածանցներն են, որոնք գոյականի, ածականի, թվականի, դերանվան, բայի, բայահիմքի, ինչպես նաև հենց մակբայի վրա դրվելով՝ մակբայ են կազմում:</p>

	Ժամանակակից հայերենում կան շուրջ 30 մակբայակերտ ածանցներ (-ակի, -յան, -ովի, -ովին, -որեն, -պատիկ, -պես, -ուստ, -և, -ուց):
Դերանվանակերտ	(այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, որպիսի, ինչպիսի):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դեռ վաղ ժամանակներից ածանցների առաջացման հիմք են ծառայել մի շարք բառարմատներ ու բառահարաբերական ձևույթներ: Լեզվի երկարատև զարգացման ընթացում այդ ձևույթները իմաստափոխվելով ածանցներ են դառնում⁹:

Լեզուն երբեք չի բավարարվում եղած ածանցներով և անհրաժեշտության դեպքում ստեղծում է նոր ածանցները, այդպիսի ձևույթները կոչվում են ածանցակերպներ (аффиксоиды, суффиксоиды)¹⁰:

Ածանցներն առանձին վերցրած որևէ կոնկրետ իմաստ չեն արտահայտում՝ բովանդակություն են ստանում, երբ արմատների, բառերի կամ բառահիմքերի հետ միավորվում ու նոր բառեր են կազմում:

Ուսումնասիրելով ժամանակակից հայերենի ածանցները, տարբերակեցինք նախաձանցներն ու վերջաձանցները՝ նկարագրելով առանձին-առանձին նրանց ձևաիմաստային հիմնական խմբերը, կենսունակության աստիճանը, բերեցին համապատասխան օրինակներ, նշեցինք թե ածանցներն ինչ իմաստ արտահայտող բաղադրիչների հետ են գործածվում և ինչ խոսի մասերի պատկանող բառեր են կազմում: Ցույց տվեցինք տարբեր ածանցներով կազմված բառեր: Խոսեցինք ժխտական, դրական նախաձանցների վերջաձանցների ամբողջական ցանկի մասին և նրանց արտահայտած իմաստների: Ստույգ ներկայացրինք ածանցների առաջացումը և ծագումը:

Ածանցները քանակով առանձնապես շատ չեն՝ կենսունակ, սակավ կենսունակ, ոչ կենսունակ նախաձանցներն ու վերջաձանցները միասին վերցրած 200-ից ավելի չեն:

⁹ Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 191:

¹⁰ Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 191:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հատ. 3, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1926:
3. Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան 1978:
4. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու, Հայոց լեզու: Բառագիտություն, Երևան, 2016:
5. Էլոյան Ս., Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963:
6. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987:
7. Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989:
8. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990: